«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 44-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում «հարկային պարտավորությունների առաջադրման ժամկետները» բառերից հետո լրացնել
«, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկային պարտավորությունների ճշտման արդյունքում ավելանում է հարկային պարտավորությունը և (կամ) նվազում է հաշվանցվող (պակասեցվող) գումարը» բառերը։

Հոդված 2. Օրենսգրքի 53-րդ հոդվածի՝

1) 10-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետ.

«5) այն հաշվետու ժամանակաշրջանին, որը տվյալ հարկատեսակի մասով գտնվում է ստուգման ընթացքում կամ այն հաշվետու ժամանակաշրջանին, որի ստուգումը՝ տվյալ հարկատեսակի մասով, սկսվել է, սակայն հաշվարկի ներկայացման օրը ստուգման ընթացքը կասեցված է, բացառությամբ տրանսֆերային գնագոյացման հարկային հաշվարկների։»,

2) 10.1-ին մասում «10-րդ մասով» բառերը փոխարինել «10-րդ և 11-րդ մասերով» բառերով։

Հոդված 3. Օրենսգրքի 336-րդ հոդվածի 8-րդ մասն ուժը կորցրած ճանաչել։

Հոդված 4. Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համալիր հարկային և տրանսֆերային գնագոյացման ստուգումների հանձնարարագիրը ստուգումն սկսելու օրը ներկայացվում է հարկ վճարողին՝ ծանոթացման։»։

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից։